№ 16 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 27 1900 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 27 № 16

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Անոնք Թադէոսեանցը եւ Սրբուհի Խուդավերդեանցը սրտի ցաւով յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին առաջինը իր սիրելի մօր, երկրորդը իր մեծ մօր

ՈՎՍԱՆՆԱՅ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆՑԻ

մահը։ Յուղարկաւորութիւնը լինելու է յունվարի 27-ին, հինգշաբթի օր, ժամի 10-ին, դէպի Մողնու եկեղեցին, իսկ հոգեհանդիսը կը լինի յունվարի 26-ին, չորեքշաբթի օր, երեկոյեան ժամի 6-ին։ Պոլիցէյսկայա փողոց, № 28/30։ 1—2

Նունէ Միքայէլեան Իգիթխանեան, Մարիամ Միքայէլեան Բուրդիկեան, Յովհաննէս եւ Դաւիթ Միքայէլեան եւ Նատալիա Ալէքսանդրեան Շահլամեանները, խորին վշտով յայտնում են—առաջինները իրանց սիրելի եւ անմոռանալի մօր, իսկ վերջինը իր թանկագին սկեսուրի՝

ՆԱՏԱԼԻԱ ՊԱՊԱՅԵԱՆ ԹԱՀԼԱՄԵԱՆԻ

մահը, ինդրում են իրանց ազգականներին եւ ծանօթներին հինգշաբթի, ամսիս 27-ին, առաւօտեան ժամի 10-ին, չնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին, որը տեղի է ունենալու իր բնակարանից՝ Մեչչանսկայա փողոց № 18, Աբաս-Աբատակի հրապարակի մօտ, դէպի Զիզրաչէնի Աւետաց ս. Աստուածածնի եկեղեցին։ Ամփիոքը կատարվելու է չորեքշաբթի, ամսիս 26-ին, երեկոյեան ժամի 6-ին։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչու՞ չը հետեւենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաչարժից վնասվածների օգտին. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր միջնակարգ դպրոցները.

ԻՆՉՈՒ�never ՉԸ ՀԵՏԵՒԵՆՔ

Ո՞րքան մխիթարական բան կը լիներ, եթէ հասարակական գործողը կամ այս և այն հիմնարկութեան պաշտօնեան, որ թոյլ է տուել մի տգեղ և անարգնիւ վարմունք՝ զգար իր պարտաղանցութեան ծանրութիւնը և ինքն իրան հեռանար իր պաշտօնից։ Եթէ մարդիկ մեր երկրում ընդունակ լինէին մի այդպիսի որոշման, մենք մի գեղեցիկ օր կը տեսնէինք մի չը տեսնված տեսարան, օրինակ, մեր եկեղեցիների 99 տոկոսը մնացած առանց երեցփոխների և մեր միւս հաստատութիւնները առանց պաշտօնեաների։ Սակայն կեանքի մէջ մեծ մասամբ մենք հակառակն ենք տեսնում։

Հէնց այն անձինք, որոնցից ցանկանում ենք հեռանալու պատրաստականութիւն, ոչ միայն յամառութեամբ մնում են իրանց տեղերում, այլ և ամէն միջոցներ են գործ դնում՝ ձեռքից չը թողնելու մի անգամ գրաւած տեղերը։ Այդ երևոյթը բացառիկ չէ և պէտք է ասել որ դժբախտաբար միայն մենք չենք այդ անմխիթար վիճակի մէջ։

Երբ այդպիսի պատրաստականութիւն չը կայ, սփոփիչ են և խրատական են գոնէ այն դէպքերը, երբ հասարակութիւնը կամ հիմնարկութեան անդամները այնքան դեռ թմրած և մեռած չեն, որ բողոք են յարուցանում անարժանների և անաղնիւների դէմ և ստիպում նրանց հեռանալ իրանց պաշտօններից։ Ամենքը յիշում են Վիեննայի պրոֆէսօր Լէօպոլդ Շէնկին, որ այնքան աղմուկով հանդէս հանելու եկաւ իր իբր թէ գտած եղանակը՝ ազդելու արգանդի մէջ եղած մանուկի սեռի վրա։ Վիեննայի համալսարանի բժշկական ֆակուլտետի պրոֆէսօրների խորհուրդը, մանրամասն քննելով գործը, եկաւ այն եզրակացութեան, որ Շէնկ թոյլ է տուել իրան գիտելու անարգ միջոցի—անարժան ըէկլամի, և այդ պատճառով որոշեց Շէնկին յանդիմանել։ Շէնկ չը հեռացաւ իր պաշտօնից և շարունակեց իր դասախօսութիւնները, մինչև որ նոր նշանակված մինիստրը պաշտօնապէս առաջարկեց նրան թողնել համալսարանը։

Մի ուրիշ օրինակ։ Ռուսաստանի նեղքին նահանգներից մէկում գաւառական ազնուականութեան պարագլուխ Կօժին թոյլ էր տուել իրան զանազան ձևերով իր ձեռքը գցել գիւղացիների հողերը և յեւոյ ծախել նրանց արտասահմանեան գրամատէրերին, իբրև հանքերով հարուստ հողեր։ Բարձրացաւ մեծ աղմուկ այդ առիթով. շատ խօսվեց, գրվեց, բայց Կօժին մնում էր անդրդուելի։ Նորերս Լիպեցկի գաւառի ազնուականների մի մասը, համբերութիւնից դուրս գալով, դիմել է Կօժինին հետեւեալ նամակով. ,,Ամբողջ Ռուսաստանը քննում է ձեր գործերը, որոնք վերաբերվում են գիւղացիներից հանքեր գնելուն և օտարներին ծախելուն։ Մենք ձեզ չենք դատում, բայց մեզ վշտացնում է մամուլի մէջ երևացող մշտական այն առարգանքը, որ ուղղված է դէպի մեր պարագլուխը. մենք ձեզ խնդրում ենք թողնել այդ պաշտօնը և ձեզնից հեռացնել այն մեղադրանքը, թէ դուք օգտվում էք ձեր ներկայ պաշտօնից՝ ձեր անձնական շահերի համար,,։

Ո՞րքան գեղեցիկ կը լիներ, եթէ այդ տեսակ դասեր տրվէին աւելի յաճախ և ուրիշ տեղերում ևս։ Սակայն մարդիկ գերադասում են լռութիւնը և աննկարելի ներողամտութիւնը։ Ցաւալի է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Կրօնների պատմութիւնը—ի հարկէ այն պատմութիւնը, որի գրողները վարդապետները չեն կամ վարդապետամիտ մարդիկ—հարստացաւ մի նոր, շատ հաստատուն փաստով եւս։ Նա մերկացրվեց մարդկութեան առաջ XIX դարի վերջին տարում, որպէս զի մի աւելորդ անգամ եւս ապացուցանէ, թէ ինչ բաների ընդունակ են Քրիստոսի անարժան աշակերտները։ Մենք խօսում ենք այն դատաստանական գործի մասին, որ Նորերումս քննվում էր Պարիզում։ Վալդէկ-Ռուսսօի մինիստրութիւնը, ինչպէս յայտնի է, ամէն եռանդ գործ է դնում ֆրանսիական ազատութեան մէջ բուսած վնասակար որոմները արմատահան անելու համար։ Նրա այդ ջանքերից վերջինն այն էր, որ Պարիզի դատարանի առաջ հանվեց ասսումպցիօնիստների միաբանութիւնը։ Ի՞նչ է դա։ Դատաստանական քննութիւնը առատ նիւթ էր հաւաքել, եւ պրոկուրօրի մեղադրական ճառը կրօնական հաստատութիւնների պատմութեան մի շատ գեղեցիկ աղբիւր է։ Գիտենք որ կաթոլիկ եկեղեցին, միշտ համաչխարհային թագաւորութեան մտքին նուիրված, դարերի ընթացքում գործադրել է բոլոր ներելի եւ աններելի միջոցները՝ իր քաղաքական տիրապետութիւնը պահպանելու համար։ Այդ նպատակով էր որ պապը Քրիստոսի փոխանորդ եւ ի վերջոյ անսխալական յայտարարվեց. այդ նպատակով էր եւ այն, որ հիմնվեցան կրօնական միաբանութիւններ—բենեդիկտեան, դօմինիկեան, կապուցին, եզուիտ եւ այլ հարիւր ու մի անուն ունեցողներ։ Յայտնի է, որ այդ սրբազան հայրերը դրօշմել են պատմութեան մէջ շատ եւ շատ անպատիւ էջեր՝ ինկվիզիցիայի խարոյկների, սարսափելի եզուիտականութեան եւ այլ միջոցներով։ Ահա այդ կարգերից մէկն է ասսումպցիօնիստների միաբանութիւնը։ Նա հին չէ, կազմվել է 1850-ական թուականներին։ Համաչխարհային նուիրական հակացողութիւնների դժբախտութեան համար էր, որ կաթոլիկ եկեղեցին իր զինաւորած խաւար ոյժերին յանկացնում էր սուրբ անուններ. Յիսուսի անունով է հիմնված Լոյոլայի միաբանութիւնը, եւ «եզուիտ» պարզապէս նշանակում է յիսուսեան. մտաբերեցէք այդ ուխտի պատմութիւնը, եւ անունը ձեզ կասէ, որ դա մի մեծ սրբապղծութիւն է։ Ասսումպցիօնիստ նշանակում է վերափոխման. ուրեմն վարդապետական այս նոր ուխտը Աստուածածնի վերափոխման անունով է մկրտված։ Բայց հետեւենք «Сѣв. Курьеръ» լրագրի Պարիզի թղթակցի պատմուածքներին եւ կը տեսնենք, որ սուրբ հայրերը այս անգամ էլ սուրբ անունների պղծութիւն են կատարել։ Միաբանութիւնը մեզադրվում էր օրէնքով չը թոյլատրված ընկերակցութիւն կազմելու համար։ Բայց թղթակիցը ասում է, թէ նրան կարելի էր մեղադրել պարզապէս սրիկայութեան մէջ։

Աղքատ ձեւանալով ողորմութիւն աղերսել, մինչդեռ նրանց մատուկները կոտրատվում էին ոսկու եւ արծաթի ծանրութիւնից, այդ բոլորը։ Սակայն հարց է ծագում. գոյութիւն ունեցող ծրագրով ուսանելի առարկաները արդեօք ինչպէս են աւանդվում եւ ինչ հետեւանքների հասցնում։ Դրա պատասխանը կարելի է գտնել այն բազմաթիւ զեկուցումների ու կարծիքների մէջ, որոնք տրվել են մինիստրութեանը զանազան քաղաքների մանկավարժական խորհուրդների կողմից։ Այստեղ մեր առաջ բացվում է արդի հասարակութեան կրթական եւ ուսումնական գործի խղճալի ու անմխիթար պատկերը։

Շատ ժամանակ չէ անցել, երբ Պետերբուրգի մանկավարժների հասարակական ժողովներում ի նկատի էր առնված, որ ներկայումս գիմնազիաներում «հետամուտ են լոկ դատարկ, անբովանդակ, ձեւական զարգացմանը եւ ծանրաբեռնում են գլխաւորապէս յիշողութիւնը, որ մեքենական, գիտակցութիւնից զուրկ գոյն է ստանում, յիշողութիւնը, որ ըմբռնում է լոկ բառերի, անունների, չոր ու ցամաք որոշումների, վերացական հասկացողութիւնների կոյտեր, բայց ոչ թէ մտալից փաստեր, կենդանի, ամենքի սրտին մօտ իրականութիւնը։ Աշակերտների մէջ մեռցվում է ամէն մի կենսաբոյր տրամադրութիւն, ամէն մի հետաքրքրութիւն դէպի գիտութիւնը»։ Ուստի զարմանալի չէ, որ այս տեսակ մաշող մանկավարժական սիստեմի արտայայտիչներն էլ կանգնած են իրանց արժանի բարձրութեան վրա։ Ուսուցիչների մէնոլորտը միանգամայն տոգորված է բիւրօկրատիական, սպանիչ օդով, զուրկ որեւէ կենսարար, փոխադարձ ազդեցութիւններից թէ դէպի իրար եւ թէ դէպի իրանց աշակերտները։ «Жизнь»-ի ասելով՝ հարաւային միջնակարգ դպրոցներից մէկում մանկավարժական խորհուրդը այն կարծիքն է յայտնում, որ «ամբողջ ուսումնարանական արդի բէժիմը դասատուից ստեղծում է ոչ թէ մի մանկավարժ—դեկավար, այլ մի ձեւապաշտ չինովնիկ, եւ այն բոլոր ճնշողական գրութիւնները, որոնցով դիմում են ուսումնարանին եւ դասատուներին կենտրօնական վարչութեան կողմից, միանգամայն դուրս են վանում դպրոցից կրթական սկզբունքները, դուրս քաշում աշակերտների ինքնուրոյնութիւնն»։ Մի այլ տեղ, նոյն ամսագրի խօսքերով, այն եզրակացութեան են եկել, թէ ուսուցման արդի եղանակները «դարձել են ուսուցչութեան լոկ անկենդան, մի տեսակ չոր ու ձեւական պարտականութիւններ։ Ուսուցիչը բաւականանում է նրանով, որ տալիս է տան համար դասեր, աշակերտը անգիր սերտում ու պատասխանում, եւ դրա համեմատ էլ ստանում այս կամ այն թուանշանը։ Անհրաժեշտ է տաների եւ ուսուցիչների մէջ առաջացնել սերտ շփումն, անհրաժեշտ է մոցնել գիտական զրոյցներ առաջինների եւ վերջինների միջեւ, կազմակերպել ճանապարհորդութիւններ ու զբօսանքներ, հասարակ ու պարզ յարաբերութիւններ եւ այլն եւ այլն»։

Ահա այս տեսակ պայմաններումն է կրթվում մեր մատաղ սերունդը, այն ճկուն եւ փխրուն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ամենքիս յայտնի է, թէ ինչպէս նուազ է զարգացած մեր մէջ հասարակական գիտակցութեան ու անհատական ինքնուրոյնութեան ոգին. թէ որքան կարօտ է զգացվում հասարակական տոկուն եւ անձնուէր գործիչների։ Այդ պակասը նկատելի է ոչ միայն մեզանում, այլ եւ ռուսաց կեանքում, որը այժմ մի անսովոր բարձր զարկերակով խփում եւ պարզ է կացուցանում, թէ ինչպէս այդ կեանքը առաջ է գնացել, թէ ինչպէս հասարակական պահանջները փոխվել են դրա համեմատ։ Իսկ մատաղ սերունդը, որ կրթվում է մեր միջնակարգ դպրոցներում եւ այնտեղ պատրաստվում ապագայ կեանքի համար, արդեօք ներկայ պահանջներին համապատասխան պայմաններումն է գտնվում։ Բանից դուրս է գալիս, որ կեանքը առաջ է գնացել, բայց դպրոցը յետ մնացել։ Եւ այդ հասկացել է վերջապէս պետութիւնն էլ, որի բերանը—լուսաւորութեան մինիստրութիւնն, այժմ մի յատուկ յանձնաժողով է կազմել յիշեալ հարցը քննելու եւ ըէֆորմների նոր ծրագիրը մշակելու համար։

«Ներկայումս միջնակարգ դպրոցը, ասում է «Сѣверный Курьеръ»-ը, տալիս է գիտութիւն։ Ուսումնարանների գլխաւոր հոգն է՝ իր ժամանակին անցնել նշանակված ծրագիրը եւ կարելոյն չափ աշխատել, որպէսզի աշակերտները ամբողջովին իւրացնեն ծրագրված գիտութիւնները։ Որքան փայլուն են անցել քննութիւնները՝ նոյնքան չօշափելի է լինում «հասունացածների» թիւը. որքան շատ են մանում նորաւարտներից բարձրագոյն դպրոցները՝ նոյնքան միջնակարգ դպրոցը գովելի կերպով կատարած է զգում իր պարտականութիւնը։ Իսկ թէ արդեօք միջնակարգ դպրոցներում ստացած գիտութիւնները նպաստում են աշակերտների մտքի կանոնաւոր աճմանը, զարթեցնում են արդեօք նրանց մէջ մտաւոր գիտողութիւն, տալիս են բազմակողմանի մտաւոր աշխատանքի ընդունակութիւն—դա արդէն ուրիշ հարց է, որի վրա տարաբախտաբար լուրջ ուշադրութիւն չեն դարձնում։ Զեռք բեր գիտութիւններ, իսկ մնացած բոլոր բաները ինքնին առաջ կը գան—այսպէս է մտածում ժամանակակից միջնակարգ դպրոցը»։

Ցիրաւի, եթէ քննենք արդի դպրոցների ծրագիրը՝ կը տեսնենք, որ ահագին ժամանակ ու աշխատանք են խլում մատաղ սերնդից այնպիսի առարկաներ, որոնք ոչ մի կենսական նշանակութիւն չունեն։ Իսկ որոշ կենսական նշանակութիւն ունեցող մի քանի առարկաների ծրագիրներն էլ այնպիսի ողորմելի չրջանակների մէջ են ամփոփված եւ կամ այնպիսի աքօլաստիկ ուղղութեամբ ներկված, որ մարդ ակամայ զարմանում է, թէ ինչու է զուրկ դէկ-Ռուսսօի մինիստրութիւնը, ինչպէս յայտնի է, ամէն եռանդ գործ է դնում ֆրանսիական ազատութեան մէջ բուսած վնասակար որոմները արմատահան անելու համար։ Նրա այդ ջանքերից վերջինն այն էր, որ Պարիզի դատարանի առաջ հանվեց ասսումպցիօնիստների միաբանութիւնը։ Ի՞նչ է դա։ Դատաստանական քննութիւնը առատ նիւթ էր հաւաքել, եւ պրոկուրօրի մեղադրական ճառը կրօնական հաստատութիւնների պատմութեան մի շատ գեղեցիկ աղբիւր է։ Գիտենք որ կաթոլիկ եկեղեցին, միշտ համաչխարհային թագաւորութեան մտքին նուիրված, դարերի ընթացքում գործադրել է բոլոր ներելի եւ աններելի միջոցները՝ իր քաղաքական տիրապետութիւնը պահպանելու համար։ Այդ նպատակով էր որ պապը Քրիստոսի փոխանորդ եւ ի վերջոյ անսխալական յայտարարվեց. այդ նպատակով էր եւ այն, որ հիմնվեցան կրօնական միաբանութիւններ—բենեդիկտեան, դօմինիկեան, կապուցին, եզուիտ եւ այլ հարիւր ու մի անուն ունեցողներ։ Յայտնի է, որ այդ սրբազան հայրերը դրօշմել են պատմութեան մէջ շատ եւ շատ անպատիւ էջեր՝ ինկվիզիցիայի խարոյկների, սարսափելի եզուիտականութեան եւ այլ միջոցներով։ Ահա այդ կարգերից մէկն է ասսումպցիօնիստների միաբանութիւնը։ Նա հին չէ, կազմվել է 1850-ական թուականներին։ Համաչխարհային նուիրական հակացողութիւնների դժբախտութեան համար էր, որ կաթոլիկ եկեղեցին իր զինաւորած խաւար ոյժերին յանկացնում էր սուրբ անուններ. Յիսուսի անունով է հիմնված Լոյոլայի միաբանութիւնը, եւ «եզուիտ» պարզապէս նշանակում է յիսուսեան. մտաբերեցէք այդ ուխտի պատմութիւնը, եւ անունը ձեզ կասէ, որ դա մի մեծ սրբապղծութիւն է։ Ասսումպցիօնիստ նշանակում է վերափոխման. ուրեմն վարդապետական այս նոր ուխտը Աստուածածնի վերափոխման անունով է մկրտված։ Բայց հետեւենք «Сѣв. Курьеръ» լրագրի Պարիզի թղթակցի պատմուածքներին եւ կը տեսնենք, որ սուրբ հայրերը այս անգամ էլ սուրբ անունների պղծութիւն են կատարել։ Միաբանութիւնը մեզադրվում էր օրէնքով չը թոյլատրված ընկերակցութիւն կազմելու համար։ Բայց թղթակիցը ասում է, թէ նրան կարելի էր մեղադրել պարզապէս սրիկայութեան մէջ։

Աղքատ ձեւանալով ողորմութիւն աղերսել, մինչդեռ նրանց մատուկները կոտրատվում էին ոսկու եւ արծաթի ծանրութիւնից,

մուրացկանութեան կանոններ հրատարակել եւ հանդիսաւոր խոստումներ տալ, որպէս զի հեշտ լինի ցանցի մէջ գցել յիմար եւ դիւրահաւան մարդկանց. ուխտագնացութիւններ դէպի Երուսաղէմ եւ Լուրդ, իբրեւ մասսայի կրօնական հաւատալիքների անսասթ շահագործութիւն, որ իւրաքանչիւր տարի միլիօնաւոր ֆրանկների արդիւնք է տալիս. տներ եւ ուրիշ անշարժ կայքեր գնել օտարների անունով. սարսափելի կերպով շահագործել ջահել աղջիկների կրօնական զգացմունքները, հարկադրելով նրանց առանց որեւէ վարձատրութեան 12 ժամից աւել բանել «La bonne presse»-ի տպարաններում, որոնք ահագին օգուտներ են տալիս,—դժուար է իմ կարծիքով գտնել աւելի լաւ կազմակերպված սրիկայութիւն։

Եւ իրաւ, ահա ինչ՝ է բարբառում ուխտի կանոնադրութիւնը. «Աղքատութեան խոստումը խիստ պահպանելու համար, միաբանութեան անդամները պիտի հետեւեն հետագայ կանոններին. ոչ մի բանի չը տիրել, ոչինչ չը նուիրել եւ «ոչ մի նուէր չընդունել, պարտք չառնել եւ պարտք չը տալ, հանրակացարանից ոչինչ չը տանել մի ուրիշ տուն»։ Բայց աղքատութեան նուիրված հայրերի այդ կանոնադրութիւնը վարագոյր է, որի յետեւում ահա ինչ փաստեր կան. միաբանութեան անդամները մեծ-մեծ տներ ունեն, ուրիշի անունով գնած. կամաւոր աղքատութեան այդ գառնուկ երկրպագուների գանձարանում ոսոիկանութիւնը գտաւ 180,000 ֆրանկ, եւ այդ իսկ ժամանակ սեղանի վրա ընկած էր մի նոր նամակ, որ ուղղված էր մի ազնուական կալուածատիրոջ, բայց դեռ չէր ուղարկված. դրա մէջ գրված էր. «Ես հ. Պիկարի անունից կը խնդրէի ձեզ՝ ուղարկել ձեր առատութիւնից մի տակառ սովորական գինի։ Ինչ էլ ասեն՝ մենք չատ աղքատ ենք։ Եւ իմ նամակը դրա ամենալաւ ապացոյցն է։ Կեցցէ՛ աղքատութիւնը»։ Իրանց պաշտած այդ աղքատութիւնը ծածկելու համար՝ վերափոխման հայրերը ամեն տեսակ ողորմութիւն են խնդրում—սպիտակեղէն, ուտելիք, գինի, վառելիք, նոր եւ հին մարկաներ։ Այդ բոլորից նրանք փող են հանում։ Եւ ահա այդ աղքատութեան նշանները. հաստատված է, որ միաբանութիւնը վեց տարվայ ընթացքում (1886—1892) ծախսել է... 8,674,474 ֆրանկ, ստանալով ահագին եկամուտներ։ Միայն 1897-ին միաբանութիւնը գնել է (ի հարկէ, ուրիշի անունով) երկու ահագին տուն՝ 1,276,000, ֆրանկ արժողութեամբ։ Ամենամեծ արդիւնքը տալիս է տպագրութիւնը։ Միաբանութիւնը միայն Պարիզում ունի 30 զանազան հրատարակութիւններ եւ տարին լոյս է հանում աւելի քան 130 միլիոն օրինակ լրագիրներ, ամսագրներ, բրոշիւրներ եւ այլն։ Եւ այս ահռելի աշխատանքի—չարելու, տպագրութեան, կազմելու—համար միաբանութիւնը մի հատ սանտիմ էլ չէ ծախսում. բանուորուհիների կերակուրն անգամ մուրում են վերապատուելի հայրերը։ Բացի դրանից, գաւառներում էլ մեծ քանակութեամբ հրատարակութիւններ են լոյս հանում, եւ այդ բոլոր գործունէութիւնը ունի «La bonne presse» (Լաւ մամուլ) ընդհանուր անուանը։ Կարիք չը կայ պարզելու, թէ այդպիսի անարժան ու ստոր միջոցները սրբացնող միաբանութիւնը ինչպիսի մտաւոր թոյն պիտի տարածէ ժողովրդի մէջ տպագրական մամուլի միջոցով, որպէս զի կարողանայ հասնել իր բուն նպատակին։

Իսկ նպատակը միշտ միեւնոյն է—կաթոլիկութեան քաղաքական տիրապետութիւնը։ Հռոմը, XIX դարի կէսում զրկվելով իր աշխարհական իշխանութիւնից՝ միանգամայն չը յուսահատվեց, բայց մանաւանդ չը հաշտվեց այն տարրական եւ ամենապարզ ճշմարտութեան հետ, որ եկեղեցին պիտի եկեղեցական գործերի մէջ ունենայ հեղինակութիւն. նրա տենչանքն էր՝ վերադարձնել իր նախկին դիրքը, դարձեալ աշխարհի ճակատագրի տնօրինողը դառնալ։ Այդ նպատակին հասնելու համար կը-ղերականութիւնը արեւմտեան Եւրոպայում դարձաւ Հռոմի քաղաքական գործիքը. ընտրութիւնների միջոցով ազդել պատգամաւորների վրա եւ պարլամենտներում կազմակերպել մի ուժեղ կուսակցութիւն, որ հոգով մարմնով նուիրված լինի Հռոմի եւ կաթոլիկութեան շահերին—ահա թէ ինչ պիտի անէին կրօնական միաբանութիւնները։ Վերափոխման վարդապետներն էլ գործում էին այդ ուղղութեամբ եւ այդ բանի մէջ եղուիտական միջոցներ գործադրելը հասցրել էին չատ ծաղկած դրութեան։ Գնել ընտրողներին կամ հարստահարել նրանց կրօնական զգացմունքը, որպէսզի ձայն տան եկեղեցուն նուիրված այս կամ այն մարդուն—ահա եկեղեցական հայրերի քաջագործութիւնը, որի համար վերեւ նկարագրված խարդախութիւններին եւ խաբէութիւններին են դիմում։

Եւ այս բոլորը երկնքի, սրբութեան անունով։ Հին երեւոյթ է կղերականների այս անբարոյականութիւնը. ոչ մի հնարաւորութիւն չը կայ մի տեղ հաւաքել այն բոլոր ոճիրները, որ հազարաւոր տարիների ընթացքում եկեղեցու պաշտօնեաները կատարել են իրանց սեփական երջանկութեան, իրանց փառքի համար. մարդկութեան կրած տանջանքները անթիւ ու անհամար են. բայց ինչպէս երեւում է՝ սուրբ հայրերը բաւական չեն համարում այդ տանջանքները եւ դարձեալ շարունակում են իրանց աւերմունքները։ Սակայն կայ մի մեծ նշան, որ ցոյց է տալիս, թէ կղերական չահատակութիւնները կորցրել են իրանց ոյժի մեծ մասը։ Մի ժամանակ կղերը տանջում, չարչարում էր, արիւն էր հոսեցնում եւ մնում էր անպատիժ, որովհետեւ ինքն էր աշխարհի դատաւորը։ Այժմ այդպէս չէ. այժմ նրան են դատում. եւ Պարիզի դատարանը վճռեց փակել Վերափոխման վարդապետների ուխտը։ Սա նոր ժամանակն է, որ կղերական բռնապետութեան գերեզմանն է փորում։

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք երկրաշարժից վնասված գիւղացիների օգտին հետեւեալ նուէրները.

Դերբէնտից՝ Կ. Ղազարեանից 185 բուբլի. նուիրատուներն են. Տիկ. Վ. Բաբայեան, Մ. Պողոսեան, Գ. Վանինցեան 10-ական բ., Մ. Սարուխանեան 6 բ., տ. Ա. Ազարեան, Ց. Բուլնիաթեան, Խ. Եղիազարեան, տ.տ. Ծ. Յովհաննէսեան, Մէլիք-Շահնազարեան, Ց. Աստուածատուրեան, Մ. Աստուածատուրեան, Ա. Սիմէօնեան, Ա. Օսմանցեան, Ա. Գրիգորեան, Մ. Աւշարեան, Մ. Միրզայեան, Աւ. Պողոսեան, Աթ. Պողոսեան, Ն. Տէր-Յովհաննէսեան, Կ. Շահիջանեան 5-ական բ., Բ., տիկ. Ա. Պապօվեան, Մ. Պատրիկեան, Ռ. Պապայեան, Ա. Դաղաչեան, Գ. Փանուսցեան, Եղբ. Իսաղուլեաններ, Ք. Гайдаровъ, Կ. Օրբէլեան, Կ. Կիրակոսեան, Ա. Տէր-Մկրտչեան, Ց. Եաղուբեան 3-ական բ., Մ. Միրզայեան, Ար. քահ. Սպանդունեան, տ. Ե. Յովհաննէսեան, Հ. Ա. Թաբէլեան, Մ. Պապայեան, Ն. Մնացականեան, Մ. Ազարեան, Կ. Ղազարեան, Ա. Գօդակեան, Ց. Ապրեսեան, Բ. Սարգսեան 2-ական բ., Ց. Յովհաննէսեան, Գալֆայեան, Աւետիսեան, Ս. Մատինեան, Թաւատ, Ց. Տէր-Յովակիմեան, Կ. Տէր-Յովակիմեան, Ց. Ղորղանեան, Ս. Ազարեան, Ս. Բէջանեան, Ա. Բայանդուրեան, Պ. Գրիգորեան, Կ. Զաքարեան, Ա. Ստեփանեան, Ց. Աւանեան 1-ական բ., Хуціевъ 50 կ. (հանված է ծախս 4 բ. 50 կ.)։

Մերելդա գիւղից (Սուխումի շրջան) Ա. Հէքիմեանից 64 բ. 45 կոպ. նուիրատուներն են. տ.տ. Մ. Մէլիքեան, Հ. Տիլէնեան 1-ական բ., Թ. Մալխասեան 50 կ., Ն. Զէյթունեան 25 կ., Ս. Մինասեան, Մ. Մալխասեան 20-ական կ., Գ. Զէյթունեան 2 բ., Խ. Օֆլեան 1 բ., Ն. Սէլվիեան 20 կ.։ Պ. Ղուկասեանի ձեռքով հաւաքած՝ Մ. Մէլիքեան, Առ. Մէլիքեան, Պ. Էօքսիզեան, Ա. Աստուրեան 1-ական բ., Պ. Քէօսէեան, Գր. Գալայճեան, Պ. Գալայճեան, Մ. Զօլաքեան, Բ. Միքայէլեան, Գ. Մարտիրոսեան, Ս. Մէլիքեան, Մ. Թորոսեան, Գ. Թորոսեան 50-ական կ., Զ. Գալայճեան 40 կ., Մ. Գալայճեան 30 կ., Ց. Գալայճեան, Բ. Մէլիքեան 25-ական կ., Ա. Մարտիրոսեան 20 կ.։ Կօշօր գիւղից հաւաքած Զ. Խաչատրեանի ձեռքով. Ց. Էօքսիզեան, Ա. Եանուկեան, Պ. Զատիկեան 5-ական բ., Ա. Էօքսիզեան, Ց. Պահարեան, Մ. Ստամպօլեան 3-ական բ., Պ. Էօքսիզեան, Խ. Մանուկեան, Ա. Ծուկուրեան, Ի. Զաքարեան 2-ական բ., Ա. Ուզունեան, Ց. Էօքսիզեան, Պ. Գանսուզեան, Խ. Դաւթեան, Ց. Գանսուզեան, Կ. Աալանեան, Մ. Գահուէճեան, Խ. Թօփալեան, Գ. Էօքսիզեան, Խ. Ծատուրեան, Պ. Գրիգորեան, Գ. Վարդանեան, Մ. Գահուէճեան 1-ական բ., Կ. Զատիկեան, Մ. Գարակեօզեան, Ա. Խզարճեան 50-ական կ., Գ. Ծուկուրեան 1 բ. 50 կ., Գ. Խզարճեան 20 կ.։

Կարսից՝ Եղիշէ վարդապետ Մուրադեանից 218 բուբ. 85 կոպ. եւ 1 բուպի, որ հաւաքված է. 1) Մազրա գիւղից. Պ. Գէորգեան 15 բ., Ա. Հաջիեան 10 բ., Տ. Ցարութիւնեան, Խ. Գրիգորեան 8-ական բ., Գ. Հաջիեան, Գ. Ալէքսանեան, Կ. Թադէոսեան, Ա. Յովհաննէսեան, Մ. Ասլանեան 5-ական բ., Գ. Մելքիսէդիկեան, Հ. Ցարութիւնեան, Ց. Աղաջանեան, Ղ. Հաջեան, Ֆ. Առաքելեան, Ց. Գրիգորեան 3-ական բ., Գ. Նահապետեան 2 բ. 50 կ., Թ. Խաչատրեան, Մ. Հաջեան, Ս. Ղարագեօզեան, Տ. Ոսկանեան, Մ. Միքայէլեան, Ց. Տօնականեան, Օ. Յակովբեան 2-ական բ., Թ. Գրիգորեան, Ա. Մելքիսէդիկեան, Գ. Յովհաննիսեան, Ս. Գէորգեան, Ց. Նազարեան, Մ. Համբարեան, Մ. Վարդանեան, Մ. Կարապետեան, Թ. Սարգսեան, Ի. Առաքելեան, Ս. Նազարեան, Ղ. Դանիէլեան, Խ. Աղեկեան, Ց. Մարտիրոսեան, Հ. Իգիթեանեան, Ա. Աւագեան, Գ. Յովսէփեան 1-ական բ., Քալօ Սագօղլի (քիւրդ), Ց. Սողոմոնեան, Ց. Խաչատրեան, Ա. Վարդանեան, Գ. Զաքարեան, Հ. Մարտիրոսեան, Ա. Բարսեղեան 5-ական կ., Մ. Տէր-Ցարութիւնեան 45 կ., Դ. Ցարութիւնեան 40 կ., Գ. Յովհաննէսեան, Ի. Գէորգեան 25-ական կ., Ա. Աբրահամեան, Ց. Տէր-Մինասեան, Ս. Ղարիբեան, Մ. Սարգսեան, Ե. Առաքելեան, Ա. Եղօեան 20-ական կոպ., Ղ. Մկրտչեան 15 կ., Ս. Մարտիրոսեան, Պ. Մովսէսեան, Գ. Շադինեան, Գ. Ցարութիւնեան, Ս. Ցարութիւնեան, Ց. Պողոսեան, Թ. Յովիկեան 10-ական կոպ., Ե. Յովսէփեան մի ռուպի։ 2) Զայիմ գիւղի հայ բոչաներից. Ց. Պապիկեան, Հ. Մատոյեան, Ց. Մանուկեան 1-ական բ., Ց. Գէորգեան, Ա. Ցարութիւնեան 50-ական կ., Գ. Գալոյեան, Ա. Յակոբեան, Ա. Մանուկեան 40-ական կ., Մ. Մելքոնեան, Խ. Աբրահամեան, Ց. Մկրտչեան 25-ական կ., Մ. Պողոսեան, Կ. Յովհաննէսեան, Պ. Գրիգորեան, Օ. Յակոբեան, Ե. Յակոբեան, Ց. Դանիէլեան, Վ. Յակոբեան, Մ. Գալոյեան, Մ. Պետրոսեան, Ա. Վարդանեան 20-ական կ., Թ. Ալէքեան, Ս. Դանիէլեան 10-ական կոպ.։ 3) Աղջաղալա գիւղից. Պ. Մարտիրոսեան, Ս. Եղոյեան, Ի. Աւդալեան, Ն. Մուրադեան, Պ. Ղազարեան 1 բ. 50-ական կ., Մ. Սահակեան 1 բ. 30 կ., Մ. Սարգարեան, Գ. Մանուկեան, Թ. Պողոսեան, Վ. Աւետիսեան 1-ական բ., Դ. Աղաջանեան, Ս. Սարգսեան, Ծ. Հեբօլեան, Ս. Բրօլեան, Գ. Աւդալեան, Ա. Ղազարեան, Գ. Մուրադեան, Ց. Սահակեան, Ն. Գրիգորեան 50-ական կ., Խ. Հեբօլեան, Ե. Գրիգորեան 40-ական կ., Մ. Բաղդասարեան 30 կ., Մ Յակոբեան, Ց. Մարտիրոսեան 20-ական կ.։ 4) Կաղզուան աւանից. Գ. Ժամագործեան 3 բ., Մ. Ք. Տէր-Գրիգորեան, Մ. Բիչարեան, Գ. Բալասանեան, Ի. Տէր-Յովհաննիսեան, Գ. Յակովբեան 2-ական բ., Մ. Առօլեան, Ա. Ալէքսանդրեան, Ա. Մատաչեան, Մ. Պետրոսեան, Մի ոմն, Ս. Զալգրանեան, Հրաչեայ Աւետիսեան, Վ. Տէր-Ռաֆայէլեան, Կ. Չերքէզեան, Մկրտիչ 1-ական բ., Ոմն 50 կ.։ Բացի դրանից՝ Պ. Մոմոուկեանից, իր տանը ժողոված, 8 բ., Հ. Տէր-Խաչատրեանից 5 բ., Մ. Բաղդասարեանից 3 բ.։ Գանձանակներից՝ տեղական չքաւորներին նպաստելուց յետոյ մնացած՝ 27 բ. 90 կոպ.։

Բալախանիից՝ Ա. Տէր-Յովհաննիսեանից 30 բ 70 կոպ. նուիրատուներն են. Ա. Տէր-Յովհաննէսեան, Ց. Ալլահվերդեան, Ս. Սարգսեան, Թ. Բաղիրեան 3-ական բ., Ս. Տէր-Յովհաննէսեան, Մ. Համբարձումեան, Պ. Մկրտչեան, Բ. Ադիեան, Ց. Վասիլեան, Խ. Աբրիեան, Մ. Աբրահամեան, Ն. Աւետիսեան, Д. Мачервіани, В. Чертовъ, И. Кислицынъ, М. Золинъ, В. Давыдовъ 1-ական բ., Ա. Տէր-Յովակիմեան, Մ. Վասիլեան, Ն. Վասիլեան, Պ. Վասիլեան, Պ. Սաֆարեան, Ց. Մկրտչեան, Ստ. Ամիրջանեան, Պ. Թամիրեան, Բ. Վասիլեան 50-ական կ., Ա. Վարդանեան 70 կ., Ս. Ամիրջանեան 50 կ.։

Մէչէդից (Պարսկաստան) Ց. Սաֆարեանից 25 բուբլի. նուիրատուներն են. Ա. Գէորգեան, Ց. Սաֆարեան 5-ական բ., Մի անյայտ, Ց. Յովսէփեան, Կ. Պետրոսեան, Ց. Մէլիք-Առաքելեան, «Արաքս» ընկերութիւն, Վ. Տէր-Յովհաննէսեան, Բ. Գէորգեան 2-ական բ., Ս. Սաֆարեան 1 բ.։

Ընդամենը 524 բուբլի եւ 1 ռուպի։

Մինչեւ այժմ ստացել ենք 21054 բ. 44½ կոպէկ եւ երեք ոսկի ռուպի։ Ուղարկել ենք 20,000 բուբլի։ Մեզ մօտ մնում է 1054 բ. 44½ կ. եւ երեք ոսկի ռուպի։

էակները, որոնք ապագայ կեանքի երերուն ծովը պիտի նետուեն։ Ահա ասպարէզ են դուրս գալիս անձնաւորութիւններ, որոնք զուրկ են որեւէ ինիցիատիվից, ինքնուրոյնութիւնից, չունեն ուժեղ կամք, հաստատ բնաւորութիւն։ Դուք այստեղ կը գտնէք մելանխոլիկներ կամ ապագայում բախտից հալածվելու, յուսահատվելու զոհեր, որոնք ո՛ գիտէ իրանց կեանքի վախճանը որտեղ են որոնում—որանք այն զգայուն, փոքր ի շատէ սուրբ ցանկութիւններով ու նպատակներով վառվող յոյսերն են, որոնք օր օրի վրա տենչում են ազատվել ուսումնարանական նեղ շրջանակներից եւ վերջը թարշամում յանպատրաստից կեանքում։ Կամ այստեղ կը գտնէք նոյնպիսի բծախնդիրներ, ինչպէս եւ իրանց արժանի ուսուցիչները, կարիերիստներ, ինքնուրոյն մտածելուց եւ դատելուց զուրկ, դաղափարական ու հասարակական շահերից խուսափող անհատներ, որոնք միմիայն իրանց կաշուի վրա են մտածում եւ որոնք կեանքի, տիեզերքի նշանակութիւնը ընդունակ են լոկ գետնափոր խլուրդի աշխարհայեացքով չափել։ Վերջապէս կը գտնէք այստեղ ողորմելի հոգու տէր մարդիկ, կենսունակութիւնից, խանդից եւ ֆիզիքական թարմութիւնից կարօտ, մտաւոր զբաղմունքներից փախչող, բութ, միակողմանի անձինք...

Մի խօսքով՝ դուրս է գալիս, որ միջնակարգ դպրոցը խեղաթիւրում, հաշմանդամ է անում մեր մատաղ սերունդի մտաւոր-ֆիզիքական կազմը եւ այնպէս դուրս չպրտում նորաւարտներին։ Եւ ահա սրանց մի մասը սկսում է պատրաստվել առաջուց չափած-ձեւած կեանքին, որ խլուրդի իդէալներից դուրս չէ գալիս, իսկ միւսի համար սկսվում է այն կռիւը, որ համալսարանի նստարանների վրա թերեւս տեղի է ունենում պատանիների ներքին եւ արտաքին կեանքում, եւ տանում է թոյլ կամքերը դէպի կորուստ կամ դէպի անանական ապատիան. վերջապէս յետագայ կեանքը լրացնում է պակասը, կլանելով ամեն ինչ իր դաժան ճանկերում, հաշտեցնելով տիրող պայմանների հետ ողջ մնացածներին, որոնք կամաց կամաց ընկղմում են շրջապատող տղմի մէջ եւ դառնում հասարակ, մոխրագոյն միջին մահկանացուներ... Աւաղ, շատ քչերն են ազատվում այդ փորձանքից...

Սակայն մթթէ հասարակութիւնը, պետութիւնը այդ տեսակ անդամների կարօտ է զգում. մթթէ դրա համար է այնքան ծախս ու աշխատանք դրվում։ «Կեանքում,—պատասխանում է այդ հարցին «Сѣверный Курьеръ»,—իւրաքանչիւրից պահանջվում է երկու տեսակ յատկութիւն. նախ՝ հանրամարդկային—բարեացակամութիւն դէպի մարդիկ, հոգու ամրութիւն, ձեռներէցութիւն, ինքնուրոյն աշխատանքի փորձառութիւն եւ ընդունակութիւն, ֆիզիքական ոյժ ու դիմացկութիւն, կարճ ասած՝ ֆիզիքական ու հոգեւոր եռանդ. երկրորդ՝ յատուկ գիտութիւններ, որեւէ արուեստ կամ պրոֆեսիա։ Մարդիկ կրկնակի հասարակութիւն են կազմում. մի կողմից յայտնի մասնագէտների, զանազան տեսակ պրոֆէսսիաների ներկայացուցիչների, եւ միւս կողմից խստապէս հասարակական, կրօնական, գեղարուեստական եւ այլ նմանօրինակ պահանջների տէր մարդկանց»։ Վերոյիշեալ հանրամարդկային յատկութիւնների զարգացնելը միջնակարգ դպրոցին է պատկանում։ Այս դէպքում առաջի տեղը պէտք է բռնէ ֆիզիքական զարգացումն, բնական եռանդի աճումն։ Մարդու ֆիզիքական այդ ոյժից է կախված եւ նրա հոգեկան կորովը, հաւասարակշռութիւնը։ Իսկ դրա համար ոչ թէ գիտութիւններ են հարկաւոր, այլ անհրաժեշտ է միանգամայն հոգ տանել զարգացնելու բնաւորութիւնը, կամքի ոյժը, խոչընդոտների դէմ մաքառելու կարողութիւնը, անձնական ձեռներէցութիւնը։ Ի՞նչ բանի է պէտք կեանքում այն մարդը, որ զուրկ է կանգուն բնաւորութիւնից, տոկունութիւնից, ինքնուրոյնութիւնից. այդ տեսակ մարդը—փալաս է։ Մեզանում այնքան չատ են զարգացած թուլակամ, անհաստատ, հօտային կողմերը, հետեւապէս էլ մեր կեանքը այնքան միապաղաղ է՝ որ դպրոցը պէտք է լրացնէ այդ պակասը, դպրոցը պէտք է ծառայէ կեանքի այդ պահանջներին, հոգ տանի հանրամարդկային յատկութիւնների ընդհանուր զարգացման վրա։ Մի խօսքով՝ դպրոցը պէտք է լինի կրթական հիմնարկութիւն։

Բայց չը կարծէք, թէ «Сѣв. Курьеръ»-ի յօդուածագիրը այսպիսով ժխտում է գիտութիւնների նշանակութիւնը։ Գիտութիւնները, ասում է նա, գլխաւորապէս պէտք է ծառայեն իբրեւ միջոց եւ ոչ թէ իբրեւ նպատակ, ուրեմն եւ միջնակարգ դպրոցում նրանք պէտք է երկրորդական տեղ բռնեն։ Իբրեւ միջոց գիտութիւնները մեծ ծառայութիւն են մատուցանում միջնակարգ դպրոցի սաներին, նպաստելով նրանց մտաւոր աշխատանքի փորձառութեանը, մտքի արթունութեանը, եւ վերջապէս նա իր կրթական ընթացքով կոկում է բնաւորութիւնը, ամրացնում կամքը։ Դպրոցը երբէք չէ կարող իրականացնել գիտական այն լայն ծրագրները, որոնցով են այժմ զեկավարում։ Մեծ ու լայն գիտութիւնների փոխարէն, աւելի օգտաւէտ կը լիներ սահմանափակել այդ գիտութիւնները մի ամփոփ բովանդակութեամբ, բայց աւելի հիմնաւորապէս իւրացրած. եւ այն էլ այնպէս, որ նա զարթեցնէ մատաղ սրտերի մէջ սէր դէպի այդ գիտութիւնը, սէր դէպի մտաւոր աշխատանք։ Ցիչեալ պայմաններում արդէն յետագայում այդ փոքրիկ գիտութիւններից առաջ կը գան գիտական մեծ պաշարներ, որոնք բարձրագոյն դպրոցների չրջաններին են պատկանում։ Բարձրագոյն դպրոցն է այն ուսումնական հիմնարկութիւնը, ուր գտնվում է ընդհանուր եւ յատուկ գիտութիւնների, պրոֆէսսիական եւ այլ մտաւոր արուեստների չափարանը։

Խ. Ս.

Պետերբուրգ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թալին գիւղ, յունվարի 15-ին

Էջմիածնի գաւառում գտնվող այս հայաբնակ գիւղը բաղկացած է հարիւր յիսուն տնից։ Զմեռը այստեղ սկսվում է նոյեմբերին եւ տեւում է մօտաւորապէս հինգ ամիս։ Ցրտերը չարունակ սարսափելի են կատաղի քամու հետ։ Զը կան կանոնաւոր ճանապարհներ, ձիւնի պատճառով եղթեւեկութիւնը բոլորովին դադարում է։

Գիւղի երիտասարդութիւնը ուրիշ զբաղմունք չունի, բացի թղթախաղը. մտէք մի երկու-երեք մանրածախսի խանութ եւ դուք կը համոզվէք դրանում։ Այդ զարմանալի էլ չէ. լինելով համարեա թէ բոլորն էլ անդրագէտ՝ նրանք ուրիշ զբաղմունք չեն էլ գտնում։ Միակ մխիթարութիւնը այստեղի միդասեան տարրական դպրոցն է, որը բացվել է երեք տարի սրանից առաջ, 1896 թվին։ Ուսման նշանակութիւնը բոլորն էլ ըմբռնել են եւ ուրախութեամբ են ուղարկում երեխաներին սովորելու։ Գիւղի գրագէտների մէջ ծագել է ընթերցասիրութիւն, բայց դժբախտաբար ոչ ոք հրնարաւորութիւն չունի բաւականութիւն տալ այդ ցանկութեանը։ Ուսումնարանի նախկին աւագ ուսուցչի հաշուով ստացվում էր «Մշակ» լրագիրը, որից եւ օգտվում էին յիշեալ անձինք. բայց ներկայ տարում «Մշակ» չէ ստացվում այդ ուսուցչի տեղափոխվելու պատճառով, այնպէս որ լրագրի յետեւից եկողները դատարկ են դառարկ։

Կարդալով «Մշակ»-ի մէջ մի քանի պարոնների նուիրած այդ լրագրի օրինակների մասին զանազան հիմնարկութիւններին եւ հասարակութիւններին՝ ես թոյլ եմ տալիս ինձ խնդրել այն անձանց, որոնք ցանկութիւն կունենան նուիրել «Մշակ»-ի օրինակները այս կամ այն հասարակութեան, չը զլանալ մի օրինակ նուիրել Թալինի հասարակութեան, որովհետեւ եթէ կայ մի հասարակութիւն, որը կարօտ է մի լրագրի—դա Թալինի խաւար հասարակութիւնն է.

Աւագ ուսուցիչ Ա. Աստուածատուրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մուրիէի խմբագրութեամբ հրատարակվող «Le Caucase Illustré» հանդէսի № 2-ում զետեղված է Գ. Սունդուկեանցի «Պէպո» կոմեդիայի առաջին գործողութեան թարգմանութիւնը։ Միւս գործողութիւնները լոյս կը տեսնեն յետագայ համարներում։

—

Ինչպէս յայտնի է՝ Թիֆլիսի առեւտրական դպրոցի դիրեկտորի պաշտօնի համար ընտրվել էր Թեկնածու Մ. Ֆիշէր, որ այժմ գտնվում է Օդեսայում։ Ֆինանսների մինիստը հաստատել է նրան այդ պաշտօնի մէջ։ Մենք կը յայտնենք, թէ երբ պէտք է Ֆիշէր գայ Թիլիս եւ տեղի կունենայ առեւտրական դպրոցի բացումը։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը յատուկ շրջաբերականով յայտնել է, որ քաղաքային դպրոցների ուսուցիչ կարող են նշանակվել այն անձինք, որոնք աւարտել են իրանց ուսումը քրիստոնէական ուսուցչական սեմինարիաներում, այնպէս որ հրէական ուսուցչական սեմինարիայից դուրս եկած անձինք. մինչեւ անգամ եթէ նրանք ընդունած լինեն քրիստոնէութիւն, չեն կարող հրաւիրվել քաղաքային դպրոցները իբրեւ ուսուցիչներ։

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք. «Բագուի մետաղափորձի հիմնարկութեան մէջ (пробирное учрежденіе) ցուցահանդէս է սարքված այն ոսկեայ եւ արծաթեայ իրեղէնների, որոնք պէտք է ուղարկվեն Պարիզի համաշխարհային ցուցահանդէսը։ Այդ իրեղէններն ստացված են Բագուի, Ելիսաւետպոլի, Երեւանի նահանգներից, Դաղստանի շրջանից եւ մինչեւ անգամ Ֆերգանից։ Նրանց մէջ կան շատ գեղեցիկ առարկաներ, որոնք աչքի են ընկնում իրանց ինքնուրոյն կերտուածքով։ Այսպէս, օրինակ, գեղեցիկ է Ալէքսանդրօպոլից ուղարկված մի արծաթաձոյլ գօտի, որ 15 ֆունտ է կշռում եւ որի վրա գեղարուեստական տեսարաններ են փորագրված հայոց կեանքից։ Ինքնուրոյն գեղեցկութիւն ունի նաեւ մի սափոր Հայաստանի նկարով եւ հայոց պատմութեան տեսարաններով։

—

Պաշտօնական այն յանձնաժողովը, որ քննում էր Բաթումի մօտ մի առանձին «նաւթային քաղաք» հիմնելու հարցը, վերջացրել է իր զբաղմունքները։ Յանձնաժողովի զեկուցումն այս ամսին կը ներկայացնվի մինիստրների խորհրդին։

—

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում որոշեց ընդունել մի քանի փոփոխութիւններով Ռօբիի առաջարկը՝ չլինել «Փուներկուլօր», որ պէտք է կարողութիւն տայ Թիֆլիսի ազգաբնակութեանը բարձրանալ քաղաքի մօտ գտնվող լեռնային մասը առանձին չնչած կառքերով։ Թիֆլիսի համար ֆունիկուլօրը կարող է գրաւիչ լինել ամառը, երբ քաղաքում տիրող անտանելի չոգը ստիպում է մարդկանց որոնել բարձրադիր եւ հով տեղեր։

—

Մեզ հաղորդում են, որ աղահանքերի կապալառու Զաքարիա Զանտիոլաղանց յանձն է առել իր հաշուով կառուցանել Կաղզուանում հայոց եկեղեցի, որի համար պիտի ծախսէ մօտաւորապէս 12 հազար բուբլի։

—

Ֆինանսների մինիստրութիւնը ցանկանալով զարգացնել ժամագործութիւնը Ռուսաստանում, մշակել է այդ արհեստի ուսուցման ծրագիր։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 5-ին, Ծննդեան ճրագալոյցի երեկոյեան, տիկիններ Հ. Գիւլպայազեան եւ Շ. Խարմանդարեան, աւետիս ման գալով այստեղ, Ախալքալաք գաւառի անտուն անտեղ մնացածների օգտին հաւաքեցին 100 բուբլի, որը ուղարկված է Թիֆլիս պ. Նահանգապետի հասցէով։ Առաջին անգամն ենք տեսնում այսպիսի մի համակրելի քայլ Կաղզուանի կանանց շրջանում, մի քայլ, որ արժանի է ամենայն գոհունակութեան ու խրախուսանքի»։

—

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից մեզ գրում են. «Բագուաբնակ ինժեներ Վաչեան, մեր հայրենակից պ. Ս. Յարութիւնեանի միջոցով, խոստացել է նուիրել 100 բուբլի մեր գիւղում չինվելիք չերամապահական կայարանին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Լայպցիգ, յունվարի 15-ին

Մեր հասարակական կեանքի ուրախալի երեւոյթներից մէկը, որը արդէն մի քանի անգամ շեշտվել է մեր լրագրութեան կողմից, թէ Եւրօպայի եւ թէ Ռուսաստանի հայ ուսանողութեան տարեց տարի աւելանալն է։ Որքան էլ այդ երեւոյթը ընդհանրապէս ուրախալի է, առաւել եւս ուրախալի կը լինէր, եթէ կարողանայինք ցոյց տալ նրա համեմատական աճելը ուրիշ ազգերի նկատմամբ։

Այս պատահական թղթակցութեան մէջ անտեղի գտնելով չօշափել այդ շատ հետաքրքիր հարցը, մանաւանդ որ ձեռի տակ չունենք դրա համար հարկաւոր տեղեկութիւնները, թողնում ենք այդ մի ուրիշ պատեհ առիթի։ Այժմ կը ցանկանայի շեշտել մի այլ ուրախալի երեւոյթ Եւրօպայի հայ ուսանողութեան ներքին կեանքի մէջ—Նրա ձգտումը ստեղծել մօտ ընկերական կապ զանազան եւ միեւնոյն քաղաքի ուսանողների մէջ։

Այս մի պահանջ է Եւրօպայի հայ ուսանողների համար։ Ռուսաստանի ուսանողները գտնվում են աւելի մօտ հայ հասարակութեան, եւ վերջինը աւելի շուտ է հանում նրան օգնութեան։ Նրանք աւելի լաւ են ճանաչում Ռուսաստանի համալսարանները, երկրի պայմանները եւ այլն, մինչդեռ այս բոլորը պակասում է Եւրօպայի հայ ուսանողներին եւ որը լրացնելու համար ինքն ըստ ինքեան առաջանում է ձգտումՙ ստեղծել մօտ կապեր միմեանց հետ, որպէսզի որքան կարելի է մեծ օգուտ ստացվի եւրօպական կեանքից այն կարճ ժամանակի միջոցում, որ ուսանողը անց է կացնում իր համալսարանական կրթութեան ժամանակ Եւրօպայում։

Դեռ մինչեւ նոր տարին, ինչպէս գիտէք, այստեղի լրագրութեան մէջ բարձրացաւ այն հարցը, երբ պիտի տօնել նոր դարագլուխը։ Մեծամասնութեան կարծիքը այն էր, որ պիտի տօնել 1901 թվին. Վիլհելմ կայսրը այստեղ եւս ցոյց տուեց իր կամքը, հրամայելով տօնել այս տարվանից։ Լայպցիգի հայ ուսանողութիւնը, չը ցանկանալով հասարակ ականատես լինել այն ուրախութեան, որին նուիրվում է նոր տարիի երեկոն ամեն մի գերմանացի՝ տօնեց ինքը եւս միասին իր ընկերական շրջանում, որին մասնակցեցին այստեղ գտնվող երկու հայ ընտանիքներ եւ Միտվայդայի, Հալլէի ու Ֆրայբէրգի ուսանողները։ Երեկոյթը կրում էր ընկերական բնաւորութիւն եւ անցաւ շատ ուրախ։

Իր այս ուրախութեան ժամերին նա չը մոռացաւ եւ թիւրքահայ սովեալներին։ Սպասել մի ուսանողութիւնից մեծ օգնութիւն, ի հարկէ, չէր կարելի, եւ այդ երեկոյ բոլոր ներկայ եղողների մէջ ժողոված գումարը, 410 մարկ, մեծ չէ, բայց գնահատելի է այն ձգտումը եւ այն զգացմունքը, որը արտայայտվեցաւ դէպի սովամահ լինող իր եղբայրները։

Ի միջի այլոց յիշենք, որ Լայպցիգի հայ ճեմարանական ընկերութիւնը անցեալ ամառային կլիմամեակին եւս ձեռնարկեց մի ժողովարարութիւն սովեալների օգտին Եւրօպայի հայ ուսանողութիւնների մէջ, որին սիրով մասնակցեցին չատերը եւ այսպիսով ժողովեցաւ 525 մարկ, իսկ Բերլինի ուսանողութիւնը առանձին ժողովելով մի գումարՙ ուղարկեց պ. Զանչեանին։ Х.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական սենատի նոր ընտրութիւնների ընդհանուր հետեւանքը հետեւեալ թիւերով է արտայայտվում։ Ընդամենը պէտք էր ընտրել 99 անդամ։ Այժմ ընտրված են 61 հանրապետականներ, որոնցից 46-ը հին անդամներից են, իսկ 15-ը նոր. 6 ազատամիտ հանրապետականներ, որոնցից 1-ը հին անդամ, իսկ 5-ը նոր. 18 արմատականներ, որոնցից 8-ը նախկիններից, իսկ 10-ը նոր. 5 արմատական սոցիալիստներ, 2 սոցիալիստ, 3 նացիոնալիստ եւ չորս պահպանողական։ Ընտրութիւնների ժամանակ սեւացած են շատ կանդիդատ-օֆիցերներ, որոնց մէջ են նաեւ գեներալ դը Ֆբրանս, Բրբիլիօ, Լավեռ, Պրակս, Կլիւզերէ, Պոտիէ, ծովապետ Գալլիբեր, գնդապետ Բավօ, Մօնտէյլ, Պարանտի, Ավրել, Պիկօ եւ ուրիշներ։ Գեներալ Մերսիէի յաղթութիւնը եւ Բանկի պարտութիւնը մեծ ոգեւորութիւն է առաջ բերել ազգայնների շրջանում, թէպէտեւ Մերսիէն բռնել է մի այնպիսի տեղ, որ առաջ էլ պատկանում էր յետադիմականներին։ Հանրապետական մամուլը մասնացոյց է անում շատ նացիոնալիստ կանդիդատների անաջողութիւնը եւ ընտրութիւնների հետեւանքը նպաստաւոր է համարում հանրապետականների համար։

—Ռուսաց կառավարութեան թոյլտուութիւնը Պարսկաստանի փոխատու բանկին գնելու պարսկական նոր փոխառութիւնը՝ բազմաթիւ բացատրութիւնների առարկայ է այժմ արտասահմանեան մամուլի մէջ։ Արդէն ««National Zeitung» ասում է, թէ Պարսկաստանն այժմ գլխովին կախված կը լինի Ռուսաստանից։ Շահաբերական տեսակէտից այդ գործը գուցէ եւ կասկածելի է, սակայն քաղաքական տեսակէտից անտարակոյս Ռուսաստանը մեծ գործ կատարեց։

—Պարսից շահի Բերլին եւ Պարիզ գնալու լուրը հաստատվում է։ Շահը ճանապարհ կընկնի ապրիլին իր երկրորդ որդի Մալէկ-Մանսուր-Միրզայի ուղեկցութեամբ, որ մի տարի առաջ գնացել էր Եւրոպա բժշկվելու համար։

—Բերլինից հեռագրում են «Neue Freie Presse» լրագրին, թէ ուրիշ տեղեկութիւններ Զինաստանում պատահած նշանաւոր անցքերի մասին չեն ստացված։ Մինչեւ անգամ ինքը չինական գեսպանը ոչինչ չը գիտէ եւ շարունակ մարդ է ուղարկում գերմանական արտաքին գործերի մինիստրութեանը հարցնելու, թէ չեն ստացված արդեօք նոր տեղեկութիւններ։ Բերլինում Ռուսաստանի ազդեցութեանը չեն վերագրում Պեկինի պաշտօնական յեղափոխութիւնը։ Որոշված է սպասել անցքերի շարունակութեանը։ Հեղինակաւոր շրջաններում կարծում են, որ այժմ ոչ մի հիմք չը կայ խախտելու այդ սպասողական դրութիւնը, մինչեւ որ տեղի չունենան նոր անցքեր, որոնք եւրոպացիների կեանքը վտանգի ենթարկէին Չինաստանում։

—«Kölnische Zeitung» լրագիրը պատմում է մի փաստ, որ լուսաբանում է գերմանացիների այժմեան վերաբերմունքը դէպի անգլիացիները։ Երբ Բաւարիայում տարածվեց մի լուր, թէ Բուլլերը յաղթված եւ գերի է առնված՝ ամբողջ ազգաբնակութիւնը հրճուանք արտայայտեց։ Բոլոր հրապարակական տեղերում երաժիշտները, հասարակութեան պահանջմամբ, ածեցին բօէրների օրհներգը եւ ժողովուրդը գլխարաց ու ոտքի վրա լսեց օրհներգը։ Ամբողջ բաւարական երիտասարդութիւնը զարդարվեց տրանսվաալեան ազգային գոյների ծաղիկներով։ Ժողովրդի ոգեւորութիւնը բօէրների յաղթութեան առիթով աննկարագրելի է։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

25 յունվարի

ԿԱՊՇՏԱՏ։ Կրիւզէր եւ Շտէյն յունվարի 2-ին լորդ Ռոբերտսին ուղարկվեցին հաղորդագրութիւններ, որոնցով բողոք յայտնեցին անների կործանման եւ հողային սեփականութեան աւերման դէմ։ Ռոբերտս յայտնեց, թէ այդ մեղադրանքներն անորոշ եւ անհիմն են։ Դիտաւորեալ աւերումները անգլիական սովորութիւններին չեն համապատասխանում։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտէրի գործակալութիւնը» յանձնարարված է յայտնելու, թէ գեսպան Մանսոն արձակուրդ ստանալով հեռացել է Պարիզից դէպի Բիվիերա։

ՎԻԵՆՆԱ։ Այսօր կայացաւ առաջին նիստը այն կօնֆերէնցիայի, որ հրաւիրված է կառավարութիւնից ազգայնական տարաձայնութիւնները բառնալու նպատակով Բոհեմիայում եւ Մօրաւիայում։ Մինիստր-նախագահը ողջունեց ժողովը եւ ցանկութիւն յայտնեց խաղաղութիւն վերահաստատել հինաւուրց կայսրութեան մէջ, որին չատ երկար ժամանակ ալեկոծում է ազգային չարաբախտ թշնամութիւնը, մեծապէս վնասելով նրա տնտեսական բարգաւաճմանը։ Էնգել ի դիմաց չեխական ժողովրդական կուսակցութիւնների, պատրաստականութիւն է յայտնում օգնելու ազգային թշնամութիւնը սահմանափակելու գործին։ Ֆունկէ նոյն միտքն է յայտնում։ Որոշված է վաղը քննադատութեան ենթարկել Մօրաւիայի հարցը, իսկ չորեքշաբթի—չեխականը։

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՆ։ Երէկ արեւային հարուածի 219 դէպքեր պատահեցին, որոնցից 134-ը վերջացան մահով։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ուիլիամ Ռէդմոնդ հարցնում է, թէ մտադիր չէ՞ արդեօք Բալֆուրը որեւէ փայաթուղթ ներկայացնել կամ որեւէ տեղեկութիւն հաղորդել նոր եռապետական դաշնակցութեան մասին Անգլիայի, Ամերիկայի եւ Գերմանիայի մէջ, որի մասին Զեմբերլէնը խօսեց Լէյնտիրում 1898 թուին։ Բալֆուրը պատասխանում է, թէ Զէմբէրլէնը երբէք այդպիսի տեղեկութիւններ չէ հաղորդել։ Հարկօրա ապացուցանում է, թէ այժմեան պատերազմը հետեւանք է 1881—85 թուի քաղաքականութիւնից հրաժարվելուն։ Դժբախտաբար կառավարութիւնը դիմեց այնպիսի մարդկանց, որոնք ժամ յարաբերութիւններ ունէին Զեմսօնի արշաւանքն սկսողների հետ եւ դա պատերազմի գլխաւոր պատճառն էր։ Բօէրների բնաւորութիւնը եւ այդ ժողովրդի եռանդը, որ պաշտպանում է իր ազատութիւնը, բաւականաչափ չէին գնահատված։ Հարկօրա պահանջում է, որ նորից նշանակվի հարաւ-աֆրիկական յանձնաժողովը ստուգելու համար, թէ կառավարութիւնը խառն չէր Զեմսօնի արշաւանքին։ Ճառախօսը ապացուցանում է, թէ պատերազմը հիմա պէտք է առաջ տանել մինչեւ հնարաւորութեան վերջին կէտը։

Զէմբէրլէն պատասխանում է, թէ պատերազմն արդարացի եւ անհրաժեշտ էր։ Անգլիայի եւ Տրանսվալի մէջ եղած տարաձայնութիւնները հիմնական եւ ոչ տեխնիկական նշանակութիւն ունեն եւ գոյութիւն ունէին 1881 թուից առաջ։ Այդ տարաձայնութիւնները ծագում են այն մեծ տարբերութիւնից, որ կայ անգլիացիների եւ բօէրների բնաւորութեան եւ բարոյականութեան մէջ։ Բօէրների գերիշխանութեան հետեւանքը կը լինի միւս բոլոր ցեղերի ստորացումն, այնինչ Անգլիայի գերիշխանութեան տակ բոլոր սպիտակամորթ եւ խաւիչիկ ցեղերը հաւասար իրաւունքներ կը վայելեն։ Մի քանի շաբաթից յետոյ Հարաւային Աֆրիկայում 200,000 զօրք կը լինի։ Ամեն հնար եղած միջոցները պէտք է գործադրվեն կազմակերպելու համար մի այնպիսի զօրեղ պաշտպանողական բանակ, որպիսին երեւիցէ տեսնված է աշխարհում։ (Հաւանութիւն)։ Երբէք չը պիտի լինի երկրորդ Մաիւբա, երբէք թոյլ չի տրվի բօէրներին Աֆրիկայի սրտում հիմնել ցեղային առեւտրեան ամրութիւն եւ վերաբերվել անգլիացիներին՝ որպէս աւելի ստոր ցեղի։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Անգլիան եւ Միացեալ Նահանգները բարեկամական համաձայնութիւն կայացրին իրանց մէջ, որով Անգլիան ինքնաբերաբար, առանց որեւէ վարձատրութեան, հրաժարվում է Նիկարագուայի ջրանցքի վրա ունեցած կօնտրոլի իրաւունքից։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ի Պարիզի գործակալը բրիտանական գեսպան Մօնսոնի ֆրանսիական մայրաքաղաքից հեռանալու մասին գրում է, թէ Մօնսոնը, յիրաւի, ոչ մի միջոցի չէ դիմել «Journal» լրագրի կարբիկատուրիստ Լէանդրին պատուաւոր լեգէօնի պատանչան տալուն արգելք լինելու համար։ Մօնսոնը ենթադրում է, թէ ներկայ հանգամանքներում իր ներկայութիւնը Պարիզում աւելի կը բարդէր դրութիւնը, քան թէ կը լաւացնէր։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Դիլլօն ապացուցանում է, թէ իրլանդացի նացիոնալիստները չեն կարող ձայն տալ յօգուտ գահակալ ճառի պատասխանն ուղղելու առաջարկութեան, որովհետեւ նրա մէջ նպաստաւոր կերպով է խօսվում անարդար պատերազմը շարունակելու մասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մորսեռ. հիւանդ.
Կ. Մ. Ձիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. Պրօսասովիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կոծքի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Դ. Դուրկո—1¼—2 ժ. ներքին հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսասովիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակօվսկի—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7—7½ ժ.
Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն մէզի, խլխլ և արեան:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. Առվանիսյանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
80—150 **Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ**

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժ. ՄԻԽԱՅԻԼ ԳԷԴԷՎԱՆՈՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից:

Առաւօտեան՝

Վ. Ի. ՃԻՃԻՆԱԴԶԷ—աստմների հիւանդ. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. ամեն օր 10½—12 ժ.
ԵՖԻՄ ՊԱՒԼՕՎԻՉ ԳԱՌԻՆԴԷԼԻՆ—ներքին և երեխաների հ. ամենայն օր ժ. 11—12, բացի շաբաթ օրերից:
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—աչքի հ.—12—1 ժ.
Ն. Զ. ՈՒՄԻԿՕՎ—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12—1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. 12—1 ժ. և երեքշաբթի օր 3—4 ժ.
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԳՕՎ—վեներական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—նեարդային և ելեկտրաէրապիա, 1—2 ժ.

Երեկոները՝

Գ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.
Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար:
Վճարը խորհրդի համար—50 կ. Ճաշացանը պայմանով:
Նիկոլաևսկայա փողոց, Վօրոնցովի արձանի հանդէպ, տ. Սաքինովի, № 11
Հիւանդանոցի վերատեսուչ՝
0—14 **Միխայիլ Գէդէվանով**

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԻ

1 մաս, 160 երես, 1 ռուբլի

(Ճանապարհածախսով 1 ռուբլի 20 կոպէկ)

Դիմել՝ Женева, Швейцарія, Т. Н. Іоаннесянцу.

Jenève, Suisse, Rue de Candolle 19, Pension Vivien, M. T. Іоаннissian. (Ե. չ.) 4—10



ՎՐԱՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունվարի 27-ին

Վրաց դրամատիկական խմբի անդամները, մասնակցութեամբ Վ. Ս. Ալէքսեէվ-Մեսխիեվի

Գ. Վ. ԳԷԴԷՎԱՆՕՎԻ բենեֆիսին

կը ներկայացնեն

ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ

Ողբ. 5 արարուածով, հեղ. Գուցկօվի, թարգմ. Բաքրաձէի:

Մասնակցում է ամբողջ խումբը:

2—3

Լոյս է տեսել

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

հեղինակի պատկերով եւ կենսագրական ակնարկով:

ԳԻՆՆ Է **20** ԿՈՊԷԿ 3—3

Մի չքաւոր շուշեցի ուսանողի համար, որ ուսանում է Պետերբուրգի ատամնաբուժական կուրսերում, ես ստացել եմ նուիրատուութիւններ հետեւեալ պարոններից. Ա. Մանթաշեան 25 ր., Յ. Ադամեան և Մ. Արամեան 15-ական ր., Իշխան Պ. Արղութեան, Ա. Կրասիլնիկեան, Դ. Տէր-Մարգարեան, Տ. Դիլղարեան, Ա. Խաչատուրեան 10-ական ր., Խ. Նազարբէգեան, Ս. Կրասիլնիկեան, Պ. Դատուրեան, Ա. Եղիազարեան, Մ. Խունունց, Բ. Յակոբեան 5-ական ռուբլի. ընդամենը 135 ռուբլի:

Այս փողը յունվարի 20-ին Թիֆլիսի Առևտրական բանկով № 28386—փոխադրվեց Պետերբուրգ ուսանող պ. Տիգրան Յարութեանցի անուամբ. իմ և նրա կողմից խորին շնորհակալութիւնս եմ յայտնում մեծարգոյ նուիրատուներին:

Դերասան՝ Գ. Պետրոսեան

Բագու. 1—1

Վիեննայի Մխիթարեանների տպարանում

Մամուլի տակ է

ՋԷՅԹՈՒՆՑԻ

ՋԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ

I մաս (մինչև 1890 թ.)

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կորիճի պատկերով:

Բաժանորդագիրը ճանապարհածախսով 1 ռուբ. 20 կոպ. կամ 3 Ֆրանկ:

Ռուբլիները ուղարկել թղթադրամով, մանր փողը նամականիշներով (марка):

Դիմել պ. Տիգրան Յովհաննէսեանին հետեւեալ հասցէով. Женева, Швейцарія, Т. Н. Іоаннесянцу.

Jenève, Suisse, Rue de Candolle 19, Pension Vivien M. Tigran Ioannissian.

(Ե. չ.) 4—11

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ:

Հասցէն՝ Красногорская ул. № 14. 15—20

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ „ՄԻՋՆՈՐԴ"

(Посредникъ)

Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պասաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ:

Կատարում է զանազան յանձնարարութիւններ անչարժ կայքեր ծախելու եւ գրաւ դնելու: Պահանջվում է առաջին եւ երկրորդ գրաւականով փող: Մանրամասնութիւնների համար խնդրեմ դիմել գրասենեակը: № 3. 0—5

Ներկայ տարվայ փետրվարի 1-ից

ՍՏԵՓԱՆ ՂՈՒԼԵԱՆՑԻ

ժահուզի խանութը, որ գտնվում էր քաղաքխանում, տեղափոխվում է ՇԱԴԻՆՕՎԻ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՆ, եղբ. ՄիլօՎների հանդէպ:

(2) 4—5

Լոյս տեսան

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1900 Թ.

ԾՈՑԻ և ՊԱՏԻ (Տիրակ)

Օրացոյցները:

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑԸ զարդարված է մի քանի հայ գործիչների պատկերներով. ունի նոր յաւելուած, ընդարձակ բժշկարան, հարուստ երաշխան և նոր զուարճալի վիճակարան:

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑԻՑ մէջ կան բարոյական խրատներ, նոր ծիծաղաշարժ առակներ՝ Մօլլա-Նասրէդդինից, Դալի-Քէչիչից, Պըլբուլից, այլև ժողովրդական առածներ, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բժշկական, տնտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ:

Գները { Ծոցինը—20 կոպէկ / Պատինը—50 կոպէկ

Գումարով գնողներին լինում է զիջում:

Դիմել՝ Александрополь, Карапету Апинянъ կամ Alexandrople, Karapet Apinian (Caucase).

20—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարարական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ 4 ամիսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբրայերեով, և եղած դէպքերում դանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆԴԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաև թանկագին արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեհատութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենավառ ձեռքերի ուղղելը:

Պարապմունքները սկսվելու են 1900 թվի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յարանի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: 14—20

Առևտրական մարկան հաստատված կառավարութիւնից:

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ

պատուոյ հայթայթողներ

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՕՑԿԻ եւ ԸՆԿ.

Մօսկվայում.

ԲԱՑՎԱԾ Է Ն. Տ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ից ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Մայդան, տ. **Գ. Ե. ԲԱՅԱՆԴՈՒՐՕՎԻ**

Ընկերութեան թէյը ծախու է գտնվում բոլոր լաւ մագազիններում: 7—20

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 2/14 փետրվարի ՄԻՆԴՐԻԼ շոգենաւը, նաւապետ ՇԻԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը. ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրադեանցներին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՈՎՈՐՕՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. չ.) 17—20

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ՂԱՐԱԲԱՂԻ»



ՋՐԱՂԱՑԱՔԱՐԵՐ

մատչելի գներով և զանազան մեծութեան:

Մեր հասցէն՝ Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.

Որովհետև վերջերս երևացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ չատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ:

31—40 *Քարահանքի կալվածատու՝ Աբրահամ Հասան Զալաբեանց*

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), **2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.**

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ января мѣсяца. 18—100

За успѣшнія занятія благодарности.

Преподав. ведется по собств. сочиненіямъ.

Годъ занятій десятый.

Բժշկարար Կէֆիր եւ Կումիս

Օ. ԿՕՐՕՆԱ

Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալների՝ երկու ցուցանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար: Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների տնտեսական ընկերութեան խանութին կից:

Ուսուցիչներին, սաներին և տնտեսական ընկ, անդամներին կը լինի զիջում: Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին դեղատոմս:

Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել: 27—50

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Января 1900 г.

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.